

## ԿԱՐԳ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

#### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են՝

1) գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում վնաս գնահատող փորձագետների որակավորման կարգը, հիմքերը և պայմանները,

2) փորձագետների գործունեությանը, որակավորմանը և մատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **Գործակալություն՝** «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» հասարակական կազմակերպություն,

2) **Ապահովագրող՝** Գործակալությանն անդամակցող ապահովագրական ընկերություն,

3) **փորձագետ՝** սույն կարգի համաձայն՝ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված բերքին պատճառված վնասը գնահատող փորձագետի որակավորում ունեցող անձ:

#### ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՏՐՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված բերքին պատճառված վնասը գնահատելու համար փորձագետներին տրվում են առանձին որակավորումներ՝ բերքի տվյալ տեսակին պատճառված վնասը գնահատելու համար:

4. Սույն կարգի համաձայն տրվող որակավորմամբ փորձագետն իրավասու է գնահատել բերքի այն տեսակին պատճառված վնասը, որի գնահատման իրավասությունն ունի՝ համաձայն համապատասխան որակավորման վկայականի:

### **ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

5. Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում ապահովագրված բերքին պատճառված վնասների գնահատում կարող են իրականացնել հնչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ համարվող փորձագետները:

6. Փորձագետը կարող է գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում իրականացնել փորձաքննություն հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1) ունի սույն կարգով սահմանված կարգով ստացված համապատասխան տեսակի որակավորում,

2) փորձաքննության պատվեր տված Ապահովագրողի (Գործակալության կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի) հետ ունի կնքված և գործող համաձայնագիր (պայմանագիր),

3) սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն կնքված համաձայնագրի (պայմանագրի) շրջանակներում Գործակալության համապատասխան կարգերով սահմանված կարգով ստացել է համապատասխան պատվեր:

### **ԳԼՈՒԽ 4. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՅԸ**

7. Փորձագետի որակավորում ստանալու համար Գործակալություն է ներկայացվում սույն կարգի Հավելված 1-ով սահմանված ձևով դիմում: Դիմումը ներկայացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով ([info.aina.ngo@gmail.com](mailto:info.aina.ngo@gmail.com)): Անձը պատասխանատվություն է կրում սույն կետով նախատեսված դիմումի մեջ արտացոլված տեղեկություններն իրականությանը համապատասխանելու համար:

8. Փորձագետի որակավորման գործընթաց անցնելու համար որակավորման համար դիմած անձը պետք է բավարարի Աղյուսակ 1-ով սահմանված պահանջներին՝ համապատասխանաբար դիմումին և դիմողի անձը հաստատող փաստաթղթին (իրավաբանական անձի դեպքում՝ նաև (ըստ կիրառելիության) ՀՎՀՀ-ն պարունակող փաստաթղթին, կանոնադրությանը և դիմողի անունից հանդես գալու իրավասությունը հավաստող փաստաթղթին) կցելով հետևյալ հիմնավորող փաստաթղթերի պատճենները կամ

լուսապատճենները (անհրաժեշտության դեպքում, փաստաթղթի իսկությունն ստուգելու նպատակով, Գործակալությունը կարող է պահանջել և ստուգել ներկայացված փաստաթղթի բնօրինակը):

**Աղյուսակ 1**

<b>Որակավորվող անձի տեսակը</b>	<b>Պահանջի նկարագրությունը</b>	<b>Հիմնավորող փաստաթուղթը</b>
Ֆիզիկական անձ	գյուղատնտեսական բարձրագույն կրթություն կամ	դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ (եթե անձը սովորում է (ավարտական շրջան), ապա անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան տեղեկանք)
	գյուղատնտեսական վնասի գնահատման բնագավառում կամ դրան հարակից բնագավառներում համապատասխան գիտելիքներ և որակավորում կամ	ՀՀ կամ Արցախի հանրապետության կողմից պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության պետական նմուշի ավարտական փաստաթուղթ
	երեք տարվա աշխատանքային փորձ գյուղատնտեսության ոլորտում կամ վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ գնահատման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում մեկ	կնքված աշխատանքային և/կամ քաղաքացիաիրավական պայմանագրեր կամ տեղեկանք աշխատավայրից

	տարվա գնահատում իրականացնելու աշխատանքային փորձ	
Իրավաբանական անձ	Փորձագետի որակավորում ունեցող առնվազն երկու աշխատող (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ	Որակավորման համար դիմած անձի կողմից տրված հայտարարություն՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի
	Միևնույն տեսակի որակավորում ունեցող իրավաբանական անձ փորձագետների հետ ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված փոխկապակցվածության բացակայություն	Որակավորման համար դիմած անձի կողմից տրված հայտարարություն՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի

9. Որակավորման համար դիմումը և սահմանված պահանջներին բավարարելու փաստը հավաստող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո (բացառությամբ սույն կարգի 13-րդ կետով նախատեսված դեպքերի), Գործակալությունը կազմակերպում է սույն կարգի Աղյուսակ 2-ով նախատեսված գործողությունները, որոնց դրական արդյունքի դեպքում անձը համարվում է Գործակալության կողմից համապատասխան տեսակի որակավորումն ստացած:

Որակավորման գործընթացը	Թեստավորման թեմաների շրջանակ	Դրական համարվող արդյունքը
Սույն աղյուսակով սահմանված թեմաներով և կարգով թեստավորման միջոցով ֆիզիկական անձի մասնագիտական գիտելիքների ստուգում	<ul style="list-style-type: none"> <li>• «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք,</li> <li>• Գյուղատնտեսության ապահովագրության պայմաններ,</li> <li>• Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի գնահատման կարգ և մեթոդաբանություն</li> </ul>	Առնվազն 80% թեստի արդյունք

10. Փորձագետի որակավորումը տրվում է ֆիզիկական անձանց համար՝ երեք տարի ժամկետով, իսկ իրավաբանական անձանց համար՝ անժամկետ:

11. Սույն կարգով նախատեսված կարգով անձին որակավորելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գործակալությունը որակավորված անձի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում որակավորման վկայականի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը (անվանումը) և որակավորման տեսակը:

12. Որակավորման համար դիմած և սույն կարգով սահմանված կարգով դրական արդյունքներ չապահոված անձանց ծանուցվում է դիմումը մերժելու մասին՝ թեստավորված անձանց թեստի արդյունքները տրամադրելու միջոցով:

13. Գործակալությունն առանց սույն կարգի Աղյուսակ 2-ով նախատեսված գործողությունները կազմակերպելու, համապատասխան գրությամբ մերժում է որակավորման տրամադրումը, եթե՝

- 1) դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում արտացոլված տվյալները լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն կամ չեն համապատասխանում սույն կարգով նախատեսված պահանջներին,

- 2) անձը, սույն կարգի 12-րդ կետի համաձայն, իրավունք չուներ դիմել որակավորման համար,
- 3) նա չի մասնակցել թեստավորմանը կամ հարցազրույցին:

#### **ԳԼՈՒԽ 5. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

14. Փորձագետները թեստավորվում են Գործակալության կամ Գործակալության հետ համագործակցող միջազգային խորհրդատուների կողմից: Թեստավորման անցկացման ստույգ օրվա, ժամի և վայրի վերաբերյալ տեղեկությունները թեստավորման անցկացումից առնվազն 30 օր առաջ հրապարակվում են Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքում:

15. Որակավորման համար դիմումը և սահմանված պահանջներին բավարարելու փաստը հավաստող բոլոր փաստաթղթերը Գործակալություն ներկայացնելուց հետո դիմորդները Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքում նշված թեստավորման օրը, ժամին և վայրում թեստավորմանը մասնակցում են անձամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

16. Գործակալության կամ միջազգային խորհրդատուների կողմից անձի թեստավորումն իրականացվում է համակարգչի օգնությամբ:

17. Թեստավորումն անցկացվում է Գործակալության գրասենյակային տարածքում կամ Գործակալության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ Գործակալության հետ համագործակցող միջազգային խորհրդատուների գրասենյակում՝ Գործակալության կամ միջազգային խորհրդատուի պատասխանատու աշխատակցի հսկողության ներքո:

18. Թեստերը բաղկացած են սույն կարգի Աղյուսակ 2-ով նախատեսված համապատասխան թեմաներից կազմված 50 հարցից և դրանց 4 հնարավոր պատասխաններից, որոնցից մեկն է միայն լիարժեք ճիշտ:

19. Թեստում ներառված հարցերին պատասխանելու համար անձին տրվում է 120 րոպե ընդհանուր ժամանակ: Թեստավորման տևողությունը չի երկարաձգվում այն անձանց համար, ովքեր ներկայացել են ուշացած:

20. Թեստավորումն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով: Յուրաքանչյուր անձ նստում է իր համար նախատեսված համապատասխան համակարգչի դիմաց: Նախքան թեստավորումն սկսելն անձանց տրվում են բացատրություններ՝ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

21. Թեստավորման ընթացքում անձին արգելվում է օգտվել որևէ տեսակի հուշումներից, ծածկագրերից, հեռախոսից կամ այլ սարգավորումներից, աղմկել, հուշել, խոսել, հարցեր ուղղել կամ առանց թույլտվության լքել թեստավորման սենյակը: Խիստ անհրաժեշտ դեպքերում անձին թույլատրվում է ոչ ավել, քան 10 րոպե տևողությամբ լքել սենյակը՝ միևնույն ժամանակ գտնվելով Գործակալության կամ Գործակալության հետ համագործակցող միջազգային խորհրդատուների գրասենյակի տարածքում, որի դեպքում թեկնածուն կապի հնարավոր բոլոր միջոցները նախապես թողնում է թեստավորման սենյակում՝ թեստավորման պատասխանատուի հսկողության ներքո՝ վերադառնալուց հետո դրանք հետ ստանալու պայմանով:

22. Սույն կարգի 20-րդ և 21-րդ կետերում նշված պահանջների չկատարման դեպքում պահանջը խախտած անձի թեստավորման գործընթացը դադարեցվում է և թեստավորման արդյունքները գնահատվում են 0 տոկոս:

23. Թեստի հարցի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր:

24. Սխալ պատասխաններ են համարվում՝

- 1) սխալ նշում կատարելը,
- 2) մեկից ավելի նշում կատարելը,
- 3) նշում չկատարելը:

25. Թեստի հարցերի պատասխանները անձի կողմից վերջնական հաստատվելուց, ինչպես նաև թեստավորման համար սահմանված ժամանակն սպառվելուց հետո անձն անմիջապես ստանում է իր կողմից հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, որտեղ արտացոլվում են անձի միավորները՝ տոկոսային հարաբերությամբ: Հաշվետվությունը (երկու օրինակից) տպվում է անմիջապես և ստորագրվում անձի կողմից. մեկ օրինակը պահպանվում է Գործակալությունում կամ Գործակալության հետ համագործակցող միջազգային խորհրդատուների գրասենյակում, մյուսը տրվում է անձին:

26. Թեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել՝ թեստավորման անցկացման օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային եղանակով ([info.aina.ngo@gmail.com](mailto:info.aina.ngo@gmail.com)) դիմում ներկայացնելով Գործակալություն: Գործակալությունը կամ Գործակալության հետ համագործակցող միջազգային խորհրդատուները վերանայում են թեստավորման արդյունքները և 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում բողոքարկողին արդյունքների վերաբերյալ:

## **ԳԼՈՒԽ 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

27. Փորձագետի որակավորումը դադարում է, եթե որակավորված անձը.

1) ներկայացրել է որակավորումը դադարեցնելու վերաբերյալ դիմում,

2) մահացել է, ոչ վերակազմավորման հիմքով վերակազմակերպվել է կամ լուծարվել է,

3) ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

4) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական ոլորտում կամ փորձաքննության (դրա որևէ տեսակի) ոլորտում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

5) քրեական գործով ներգրավվել է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,

6) ճանաչվել է սնանկ կամ ունի ժամկետանց պարտավորություններ,

7) որակավորման վկայականը ստանալուց հետո 18 ամսվա ընթացքում չի կնքել սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված համաձայնագիր (պայմանագիր) կամ հրաժարվել է իրականացել վնասի գնահատում:

**ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ**

Դիմումի հասցեատերը		Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն	
<b>1. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐ</b>			
Անուն, ազգանուն, հայրանուն (անվանում)			
Անձր հաստատող փաստաթղթի տվյալներ (ՀՎՀՀ)			
<b>2. ԴԻՄՈՒՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋԸ</b>			
Խնդրում եմ ուսումնասիրել սույն դիմումով ներկայացված տվյալները և տրամադրել որակավորում, որպես՝			
<input type="checkbox"/>	Ծիրանի վնասներ գնահատող փորձագետ		
<input type="checkbox"/>	Խաղողի վնասներ գնահատող փորձագետ		
<input type="checkbox"/>	Դեղձի վնասներ գնահատող փորձագետ		
<input type="checkbox"/>	Խնձորի վնասներ գնահատող փորձագետ		
<input type="checkbox"/>	Հացահատիկի վնասներ գնահատող փորձագետ		
<b>3. ԴԻՄՈՒՄԻՆ ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ</b>			
h/h	Փաստաթղթի անվանումը	Էջերի քանակը	
1			
2			
...			
<b>4. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Սույն դիմումի ստորագրմամբ դիմումատուն՝			
4.1.	Հավաստում է, որ սույն դիմումով և կից փաստաթղթերով ներկայացված տվյալները և տեղեկությունները ճիշտ են և արժանահավատ, համապատասխանում են իրականությանը, և գիտակցում է, որ կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում սույն դիմումը կարող է մերժվել:		
4.2.	Հավաստում է, որ բավարարում է դիմումով հայցվող որակավորում ստանալու համար Գործակալության կողմից սահմանված պահանջներին՝ ներառյալ. 1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ չէ, 2) դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, 3) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված չէ ֆինանսական ոլորտում կամ փորձաքննության ոլորտում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից, 4) քրեական գործով ներգրավված չէ, որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ, 5) ճանաչված չէ սնանկ և չունի ժամկետանց պարտավորություններ:		
4.3.	Պարտավորվում է սույն դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և (կամ) տեղեկություններում ցանկացած փոփոխության կամ լրացման դեպքում 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Գործակալությանը:		
5	Այլ նշումներ		
6	Դիմումատուի անունից	(անունը և ազգանունը, անձր հաստատող փաստաթղթի տվյալները)	(ստորագրությունը) Կ.Տ
7	Դիմումի լրացման ամսաթիվը	օր	ամիս տարի

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Որակավորման համար դիմած փորձաքննություն իրականացնող իրավաբանական անձ  
փորձագետ(ներ)ի կողմից Գործակալության կողմից սահմանված պահանջների  
համապատասխանության վերաբերյալ**

\_\_\_\_\_ (տրման վայր)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.

Ես՝ \_\_\_\_\_ ս (անձը հաստատող փաստաթուղթ՝  
\_\_\_\_\_, տրված՝ \_\_\_\_\_ի կողմից \_\_\_\_\_թ-ին, հասցե՝  
\_\_\_\_\_), հանդես գալով  
\_\_\_\_\_-ի անունից

սույնով հաստատում եմ, որ \_\_\_\_\_-ը որևէ կերպ  
փոխկապակցված չէ \_\_\_\_\_/\_\_\_\_\_/20\_\_\_\_թ-ին ներկայացված որակավորում ստանալու վերաբերյալ  
դիմումում նշված տեսակի որակավորում ունեցող որևէ իրավաբանական անձ համարվող  
փորձագետի հետ և չունի որևէ ղեկավար, ով միաժամանակ ղեկավար է հանդիսանում նաև  
նշված կազմակերպություններից որևէ մեկում: Տեղեկացված եմ նաև, որ որակավորումից հետո  
նշված արգելքի չպահպանումը կհանգեցնի \_\_\_\_\_-ի՝  
համապատասխան որակավորումից զրկմանը:

**Հայտարարարու,  
Կազմակերպության  
գործադիր մարմնի ղեկավար՝**

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)